ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ՝ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ. ԾՈՒՂԱ՞Կ, ԹԵ՞ ԲԱՑԱՌԻԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.52174/2579-2989_2024.1-117

Հիմնաբառեր. *քաղաքացիություն, կացության իրավունք, ներդրումներ, «ոսկե անձնագիր»*

Աննա ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ:

Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել եվրոպական մի շարք բուհերում: Հեղինակ է 50-ից ավելի գիտական և շուրջ երկու տասնյակ գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

https://orcid.org/0000-0002-5854-2473

Google Scholar profile: https://scholar.google.com/citations?user=sjZSaYsAAAAJ&hl=ru
Research Gate profile: https://www.researchgate.net/profile/Anna-Pakhlyan

Յուրաքանչյուր երկիր քաղաքացիության վերաբերյալ ունի իր օրենքներն ու մոտեցումները, որոնք էապես տարբերվում են միմյանցից: Համաշխարհային զարգացումներին զուգընթաց, նույնիսկ անձնագրերն ու քաղաքացիությունն են շատ հաճախ վերածվում բիզնեսի և սակարկման առարկայի: Մասնավոր անհատները խոշոր ներդրումների, նվիրատվությունների կամ թանկարժեք անշարժ գույքի ձեռքբերման ճանապարհով այսօր կարողանում են քաղաքացիություն կամ, առավել բրենդային անվանմամբ, «ոսկե անձնագիր» ձեռք բերել եվրոպական կամ լատինամերիկյան բազմաթիվ երկրներում՝ օգտվելով արտոնությունների ու լիազորությունների լայն շրջանակից: Սակայն, նմանատիպ ներդրումային սխեմաների գրավչությունը, միաժամանակ, լուրջ ռիսկեր է պարունակում՝ թիրախավորելով երկրները կոռուպցիոն ռիսկերի և փողերի լվացման դիտակետից:

Տարբեր երկրներում ապրող մարդկանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են քաղաքացիությամբ, որը նշանակալի ազդեցություն ունի նրանց կյանքի վրա: Ժամանակակից գլոբալացված աշխարհում քաղաքացիությունը թույլ է տալիս օգտվել այնպիսի ռեսուրսներից, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, աշխատանքի հնարավորությունը և այլն: Կախված նրանից, թե որտեղ եք ապրում, այս արտոնությունները կարող են կտրուկ կերպով տարբերվել քաղաքացիության մի տեսակից մյուսը:

Ի թիվս այլ հանգամանքների, աշխարհի երկրները միմյանցից տարբերակվում են նաև քաղաքացիություն

շնորհելու բարդությամբ կամ պարզությամբ, որի հիմքում երկրի վարած իմիգրացիոն (ներգաղթի) քաղաքականությունն է:

Քաղաքացիությունն ու դրա մասին հավաստող անձնագրերը հաճախ ապահովում են հսկայական ոչ նյութական օգուտներ կամ էլ դառնում սահմանափակումների և խոչընդոտների շարժառիթ: Այնուամենայնիվ, ոչ բոլոր անձնագրերն են հավասարազոր...

Գույնից, լեզվից և մի շարք այլ հատկանիշներից բացի, տարբեր երկրներում թողարկվող անձնագրերը միմյանցից զանազանվում են իրենց արժեքով և «հզորությամբ»: Այսպես՝ աշխարհում նոր անձնագրի տրամադրման համար գանձվող ամենաբարձր վճարը կամ տուրքը սահմանած երկրների առաջին տասնյակում են Լիխտենշտեյնը (264 ԱՄՆ դոլար), Ավստրալիան (218 ԱՄՆ դոլար), Վենեսուելան (216 ԱՄՆ դոլար), Թուրքիան (202 ԱՄՆ դոլար), Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը (185 ԱՄՆ դոլար), Մեքսիկան (170 ԱՄՆ դոլար), Շվեյցարիան (140 ԱՄՆ դոլար), Սոմալին (140 ԱՄՆ դոլար), Իտալիան (135 ԱՄՆ դոլար) և ԱՄՆ-ն (130 ԱՄՆ դոլար): Միաժամանակ, ըստ Passport-collector.com-ի համար հասանելի տվյալների, ամենամատչելի անձնագրերը տրամադրվում են Արգենտինայում, Իրանում և Վիետնամում (10 ԱՄՆ դոլար)[1]:

Համեմատության համար նշենք, որ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ 10 տարվա վավերականությամբ սովորական անձնագրի համար գանձվում է 1000 ՀՀ դրամ, իսկ կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագրի համար՝ 25000 ՀՀ դրամ պետական տուրք[2]: ԱՄՆ դոլարով արտահայտման դեպքում[3] դրանք կկազմեն համապատասխանաբար՝ 2.5 և 62 ԱՄՆ դոլար:

Անձնագրերի ուժի գլոբալ վարկանշավորման (Global Passport Power Rank 2024) արդյունքներով՝ 2024 թվականին «ամենազորեղն» Արաբական Միացյալ Էմիրությունների անձնագիրն է՝ շարժունության ապահովման 179 միավորով, որին 177 միավորով հաջորդում են Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Նիդերլանդների, Լյուքսեմբուրգի, Իսպանիայի, Ավստրիայի և Շվեյցարիայի քաղաքացիների անձնագրերը: Հայաստանն անձնագրերի գլոբալ վարկանշավորմամբ 56-րդ հորիզոնականում է՝ 83 միավոր շարժունության ապահովմամբ[4]: Վարկանշավորման նպատակն է հասարակությանը ցույց տալ, թե ինչպես է անձնագրի «ուժն» ազդում սեփականատիրոջ ինքնության, հնարավորությունների, շարժունակության և ընդհանուր կյանքի որակի վրա:

Մարդիկ, սովորաբար, այս կամ այն երկրի քաղաքացի են դառնում ծնունդով կամ ծագմամբ, թեև քաղաքացիություն հնարավոր է ստանալ մի քանի այլ եղանակներով ևս.

- ***Ծնունդով քաղաքացիություն (Jus Soli):*** Ծննդյան իրավունքով քաղաքացիություն շնորհվում է մի խումբ երկրների կառավարությունների վարած այն քաղաքականության շրջանակում, որի համաձայն՝ երկրի սահմաններում կամ տարածքում ծնված ամեն մի երեխա ավտոմատ կերպով ստանում է այդ երկրի քաղաքացիություն, նույնիսկ եթե նրա ծնողները քաղաքացիներ չեն: Թեև կան երկրներ, որտեղ պարզապես ծնվելը բավարար պայման չէ ինքնաբերաբար քաղաքացիություն ստանալու համար:
- ***Ծագումով կամ «արյան իրավունքով» քաղաքացիություն (Jus Sanguinis):*** Այս դեպքում անհատը քաղաքացու կարգավիճակ է ստանում, եթե նրա ծնողը, տատը, պապը կամ ընտանիքի այլ անդամն արդեն նման կարգավիճակ ունեն այն երկրում, որտեղ անհատը ծնվել է:

[1] Global Passport Fees 2024: How much do you pay? https://www.passport-collector.com/global-passport-fees/ (Accessed: 01.03.2024).

[2] ՀՀ օրենքը պետական տուրքի մասին (ՀՕ-186, ընդունված 27.12.1997թ.), հոդված 14 / https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=73142

[3] Հաշվարկի համար որպես հիմք է ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի՝ 01.03.2024 դրությամբ սահմանած փոխարժեքը՝ 1 USD = 403.98 AMD:

[4] Global Passport Power Rank 2024 / https://www.passportindex.org/byRank.php (Accessed: 29.02.2024).

• ***Նատուրալացում (բնականացում, հպատակագրում (Naturalisation)):*** Նատուրալացման գործընթացը որոշակի չափանիշների բավարարման դեպքում երկրում չծնված և օրինական ճանապարհով մուտք գործած անձանց հնարավորություն է տալիս քաղաքացի դառնալու՝ տվյալ երկրի օրենքների, մշակույթի, ավանդույթների և լեզվի իմացությունը ստուգող թեստի հանձնման պայմանով:

• ***Քաղաքացիություն՝ ամուսնությամբ:*** Որոշ երկրներ անհատներին թույլ են տալիս քաղաքացիություն ձեռք բերել այդ երկրի քաղաքացու հետ ամուսնության միջոցով:

• ***Քաղաքացիություն՝ ներդրումով:*** Որոշ երկրներ քաղաքացիություն են առաջարկում այն անձանց, որոնք զգալի ֆինանսական ներդրումներ են կատարում երկրում, օրինակ՝ անշարժ գույքի ձեռքբերում կամ ներդրումներ՝ աշխատատեղեր ստեղծող ձեռնարկություններում:

• ***Երկքաղաքացիությունն*** անձին թույլ է տալիս միաժամանակ մեկից ավելի երկրների քաղաքացի լինել: Աշխարհի շատ երկրներում թույլատրված է երկքաղաքացիությունը, երկրների մի մասն էլ իրենց քաղաքացին լինելու համար պահանջում են հրաժարվել այլ պետությունների քաղաքացիությունից: Նույնիսկ այն երկրներում, որտեղ թույլատրվում է երկքաղաքացիությունը, կարող են լինել որոշակի սահմանափակումներ կամ հատուկ պայմաններ: Օրինակ՝ երկքաղաքացիություն ունեցող անձը կարող է չունենալ իրավունք ծառայելու բանակում կամ զբաղեցնելու պետական պաշտոններ:

Բերված ցանկը, բնավ, սպառիչ չի կարող համարվել: Տարբեր երկրներում կարող են առաջարկվել նաև քաղաքացիության շնորհման այլ առանձնահատուկ տարբերակներ: Այդուհանդերձ, վերը նշված տարբերակներից մեզ համար հետաքրքրական են հատկապես ներդրումների դիմաց քաղաքացիության (Citizenship by Investment - CBI) կամ կացության իրավունքի (Residence by Investment - RBI) շնորհման ծրագրերը:

Մի շարք երկրներում քաղաքացիությունը կամ կացության իրավունքը կարելի է գնել ճիշտ այնպես, ինչպես շքեղ ապրանքները՝ շատ մեծ գումարների դիմաց: Գնորդները բազմաթիվ են, առաջարկի պակաս նույնպես չկա, ինչի արդյունքում ձևավորում է դինամիկ զարգացող ներդրումային միգրացիա: Վերջինս սկիզբ է առել 1984 թ. Կարիբյան ավազանի տարածաշրջանում՝ Սենթ Քիթս և Նևիսում, այնուհետև տարածում գտել Կանադայում (1986 թ.) և ԱՄՆ-ում (1990 թ.): Ներդրումային միգրացիան համեմատաբար նոր երևույթ է ԵՄ-ում, որտեղ ներդրումային քաղաքացիության ծրագրերը սկսել են կիրառվել 2007-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո և առաջին իսկ տասնամյակում[5] հասել տպավորիչ ծավալների:

Մարքեթինգային նկատառումներից ելնելով՝ ներդրումային սխեմաների (CBI/RBI) միջոցով ձեռք բերվող հատուկ անձնագրերը հաճախ բնորոշվում են «Ոսկե անձնագրեր» (Golden Passports) բրենդային եզրույթով:

Եվրոպայի կամ Հյուսիսային Ամերիկայի որևէ երկրի երկրորդ անձնագիր կամ երկքաղաքացիություն ստանալը երազանք է բազմաթիվ արտագաղթողների (էմիգրանտների) համար: Սակայն, երկարատև սպասումները, բարդ ընթացակարգերն ու օրենսդրական սահմանափակումների բազմազանությունը երբեմն այդ երազանքն անհասանելի են դարձնում: Միաժամանակ, զուգահեռ իրականության մեջ գոյություն ունեն մի խումբ երկրներ, որտեղ որոշակի ներդրումային նախապայ-

[5] EUROPEAN GETAWAY: INSIDE THE MURKY WORLD OF GOLDEN VISAS, Transparency International and Global Witness 2018 / https://images.transparencycdn.org/images/2018_report_GoldenVisas_English.pdf, p. 8.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Քաղաքացիության շնորհման առանձնահատուկ մոտեցումներն ըստ երկրների

Երկքաղաքացիություն թույլատրող երկրներ[6]		Ծննդյան իրավունքով քաղաքացիություն շնորհող երկրներ[7]	Ներդրումներով քաղաքացիություն շնորհող երկրներ[8]	Ամենից դժվար քաղաքացիություն շնորհող երկրներ[9]
Ալբանիա	Ալժիր	ԱՄՆ	Անտիգուա և Բարբուդա	ԱՄՆ
ԱՄՆ	Անգոլա	Անտիգուա և Բարբուդա	Գրենադա	Ավստրիա
Անտիգուա և Բարբուդա	Ավստրալիա	Արգենտինա	Դոմինիկա	Արաբական Միացյալ Էմիրություններ
Արգենտինա	Բանգլադեշ	Բարբադոս	Եգիպտոս	Բութան
Բարբադոս	Բելգիա	Բելիզ	Թուրքիա	Գերմանիա
Բելիզ	Բենին	Բոլիվիա	Կամբոջա	Լիխտենշտեյն
Բոլիվիա	Բրազիլիա	Բրազիլիա	Հս. Մակեդոնիա	Հս. Կորեա
Բուլգարիա	Գերմանիա	Գայանա	Հորդանան	Ճապոնիա
Դանիա	Եգիպտոս	Գվատեմալա	Մալթա	Մոնակո
Թուրքիա	Իսլանդիա	Գրենադա	Սենթ Լյուսիա	Շվեյցարիա
Իսպանիա	Իռլանդիա	Դոմինիկա	Սենթ Քիթս և Նևիս	Չինաստան
Իտալիա	Լատվիա	Էկվադոր	Վանատաու	Սան Մարինո
Լեհաստան	Լյուքսեմբուրգ	Էլ Սալվադոր		Սաուդյան Արաբիա
Խորվաթիա	Կանադա	Լեսոտո		Վատիկան
Կիպրոս	Կոստա Ռիկա	Կանադա		Կատար
Հայաստան	Հվ. Աֆրիկա	Կոստա Ռիկա		Քուվեյթ
Հվ. Կորեա	Հունաստան	Կուբա		Ֆինլանդիա
Հունգարիա	Ճամայկա	Հոնդուրաս		
Մալավի	Մալթա	Ճամայկա		
Մեքսիկա	Միացյալ Թագավորություն	Մեքսիկա		
Նոր Զելանդիա	Նորվեգիա	Նիկարագուա		
Շվեդիա	Շվեյցարիա	Չադ		
Չեխիայի Հանրապետություն	Չիլի	Պանամա		
Պակիստան	Պանամա	Պարագվայ		
Պերու	Պորտուգալիա	Պերու		
Ռումինիա	Ռուսաստան	Սենթ Լյուսիա		
Սերբիա	Սիրիա	Սենթ Վինսենթ և Գրենադիններ		
Սլովենիա	Վանատաու	Սենթ Քիթս և Նևիս		
Ֆիլիպիններ	Ֆինլանդիա	Վենեսուելա		
Ֆրանսիա		Տանզանիա		
		Տրինիդադ և Տոբագո		
		Տուվալու		
		Ուրուգվայ		
		Ֆիջի		

[6] Countries that Allow Dual Citizenship 2024 - https://worldpopulationreview.com/country-rankings/countries-that-allow-dual-citizenship (Accessed: 25.02.2024).
[7] Countries with Birthright Citizenship 2024 - https://worldpopulationreview.com/country-rankings/countries-with-birthright-citizenship (Accessed: 26.02.2024).
[8] Countries Giving Citizenship By Investment in 2024 - https://best-citizenships.com/2021/03/26/how-many-citizenship-by-investment-programs-are-there/ (Accessed: 29.02.2024).
[9] Hardest Countries to Immigrate To 2024 - https://worldpopulationreview.com/country-rankings/hardest-countries-to-immigrate-to (Accessed: 29.02.2024).

մանների բավարարման դեպքում հնարավոր է ստանալ մշտական բնակության թույլտվություն: Եվ այդ ամենը՝ առանց ծննդյան իրավունքով քաղաքացիություն ունենալու, որպես օրինական ռեզիդենտ՝ երկրում երկար տարիներ ապրելու և աշխատելու կամ տվյալ երկրի քաղաքացու հետ ամուսնության անհրաժեշտության:

ԵՄ անդամ պետությունների ոսկե վիզաների սխեմաները 2009-2018 թթ. ներգրավել են մոտ 25 միլիարդ եվրո ուղղակի օտարերկրյա ներդրումներ դեպի ԵՄ, ընդ որում, ամենաշատ եկամուտ ստացողներն են Իսպանիան, Կիպրոսը, Պորտուգալիան և Մեծ Բրիտանիան[10]:

2022 թվականի ռուս-ուկրաինական պատերազմի էսկալացմանն ի պատասխան՝ Կիպրոսը և Մալթան դադարեցրել են ԵՄ պատժամիջոցների տակ գտնվող Բելառուսի և Ռուսաստանի քաղաքացիներին զգալի ներդրումների համար տրված «ոսկե անձնագրերի» վավերականությունը: Նմանօրինակ անձնագրեր մեծահարուստ գործարարներին և նրանց ընտանիքների անդամներին սովորաբար տրվում են խոշոր դրամական ներարկումների դիմաց: «Ոսկե անձնագրերի» սեփականատերերը քաղաքացիություն էին ստանում և կարող էին բիզնես վարել ԵՄ բոլոր երկրներում[11]:

Աղյուսակ 1-ում արտացոլված են քաղաքացիության շնորհման հարցում առանձնահատուկ մոտեցումներ կիրառող երկրները, որոնց շարքում, երկքաղաքացիություն թույլատրող, ծննդյան իրավունքով կամ ներդրումներով քաղաքացիություն շնորհող երկրներից զատ, տեղ են գտել նաև այն երկրները, որտեղի քաղաքացի դառնալն աշխարհում ամենից դժվարն է:

Ներկայում աշխարհի 33 երկիր (և երկու տարածք) կիրառում է առանց սահմանափակումների ծննդյան իրավունքով (2024 թ. համար վավեր ցանկը ներկայացված է աղյուսակ 1-ում) և ևս 32 երկիր՝ ծննդյան իրավունքով սահմանափակ քաղաքացիություն շնորհելու քաղաքականություն[12]:

Աղյուսակ 1-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենաճայրահեղական երկիրը, թերևս, ԱՄՆ-ն է, որը, երկքաղաքացիության թույլատրմանը և ծննդյան իրավունքով քաղաքացիության շնորհմանը զուգահեռ, դասվում է աշխարհում ամենից դժվար քաղաքացիություն շնորհող երկրների շարքին: Նման երկրների դեպքում քաղաքացիության շնորհման այլ սխեմաների միաժամանակյա կիրառումը չափազանց հազվադեպ երևույթ է: Այսպես, օրինակ, Գերմանիայում, Շվեյցարիայում և Հյուսիսային Կորեայում երկքաղաքացիության թույլատրելիությունը որևէ շոշափելի ազդեցություն չի թողնում այդ երկրներում քաղաքացիության շնորհման բարդ և տևական ընթացակարգերի վրա: Քիչ չեն նաև այնպիսի երկրները, որտեղ գործում է քաղաքացիության շնորհման քննարկվող մոտեցումներից միայն մեկը. Հայաստանում, ինչպես և Միացյալ Թագավորությունում, Լյուքսեմբուրգում, Հունաստանում և մի շարք այլ երկրներում, թույլատրվում է երկքաղաքացիություն, Լատինական Ամերիկայի մի խումբ երկրներ կիրառում են ծննդյան իրավունքով քաղաքացիության շնորհման սխեմաներ, մինչդեռ Հորդանանը, Հյուսիսային Մակեդոնիան և Կամբոջան ներգրավված են բացառապես լուրջ ֆինանսական ներհոսքի ապահովման դիմաց քաղաքացիություն շնորհող կառուցակարգերում:

Ներդրումային ծրագրերով քաղաքացիություն առաջարկող երկրներն ու ներդրումային սահմանաչափերն արտացոլված են աղյուսակ 2-ում: Ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ երկրներն առաջարկում են իրարից էապես տարբերվող ներդրումային սխեմաներ. «ոսկե անձնագրերի» շնորհման համար մի դեպքում բավարար է սահմանված նվազագույն արժեքով (արտահայտված առնվազն վեցանիշ դոլարներով) անշարժ գույքի ձեռքբե-

[10] EUROPEAN GETAWAY: INSIDE THE MURKY WORLD OF GOLDEN VISAS, Transparency International and Global Witness 2018 / https://images.transparencycdn.org/images/2018_report_GoldenVisas_English.pdf p. 3.

[11] Кипр и Мальта лишили «золотых паспортов» граждан Беларуси и России, «Белорусы и рынок», 15 мая 2023 / https://belmarket.by/news/news-52721.html

[12] Countries with Birthright Citizenship 2024 - https://worldpopulationreview.com/country-rankings/countries-with-birthright-citizenship (Accessed: 27.02.2024).

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Ըստ ներդրումային ծրագրերի՝ քաղաքացիություն առաջարկող որոշ երկրներն ու դրանց ներդրումային սահմանաչափերը[13]

N	Երկիր	Ներդրման նվազագույն սահմանաչափն ու բնույթը			
		Նվիրատվություն կամ ներդրում ֆինանսական գործիքներում		Անշարժ գույքի ձեռքբերում կամ բիզնեսի հիմնում	
		Արժեք	Բնույթ	Արժեք	Բնույթ
2024 թ. գործող ծրագրեր					
1.	Հորդանան	$ 1.5 մլն	Բանկային ավանդ/պետական պարտատոմս		
2.	Լաոս	$ 1.5 մլն	Պատվավոր քաղաքացիություն		
3.	Սամոա			$ 1.2 մլն	Բիզնես՝ աշխատատեղերի ստեղծմամբ
4.	Մալթա	$ 750,000	Նվիրատվություն		
5.	Թուրքիա	$ 500,000	հիմնական կապիտալի ներդրում	$ 250,000	անշարժ գույք
6.	Սենթ Քիթս և Նևիս	$ 150,000	Նվիրատվություն	$ 200,000	անշարժ գույք
7.	Եգիպտոս	$ 250,000	Նվիրատվություն	$ 500,000	անշարժ գույք
8.	Կամբոջա	$ 250,000	Նվիրատվություն	$ 1.5 մլն	բիզնես
9.	Հյուսիսային Մակեդոնիա	$ 200,000	Նվիրատվություն	$ 400,000	բիզնես՝ աշխատատեղերի ստեղծմամբ
10.	Գրենադա	$ 150,000	Նվիրատվություն	$ 200,000	անշարժ գույք
11.	Վանատաու	$ 130,000	Նվիրատվություն	$ 175,000	անշարժ գույք
12.	Անտիգուա և Բարբուդա	$ 100,000	Նվիրատվություն	$ 200,000	անշարժ գույք
13.	Սենթ Լյուսիա	$ 100,000	Նվիրատվություն	$ 300,000	անշարժ գույք
14.	Դոմինիկա	$ 100,000	Նվիրատվություն	$ 200,000	անշարժ գույք
Մինչև 2024 թվականը չեղարկված կամ կասեցված ծրագրեր					
15.	Կիպրոս	€ 2 մլն	պարտատոմսեր	€ 2 մլն	անշարժ գույք
16.	Բուլղարիա	€ 1 մլն	պարտատոմսեր		
17.	Մոնտենեգրո			€ 350,000	անշարժ գույք
18.	Մոլդովա	€ 100,000	Նվիրատվություն		
19.	Կոմորոս	€ 40,000	Նվիրատվություն		

րումը, մյուս դեպքում՝ նվիրատվությունը, բանկային ավանդը կամ պետական պարտատոմսերի ձեռքբերումը, մեկ այլ դեպքում՝ պահանջվում են իրական բիզնեսում ներդրումներ՝ աշխատատեղերի ստեղծմամբ: Նշանակալիորեն տատանվում են նաև ներդրումային սահմանաչափերը. սկսած 100,000-ից (Անտիգուա և Բարբուդա, Սենթ Լյուսիա, Դոմինիկա) ընդհուպ մինչև 1.5-2 մլն ԱՄՆ դոլար (Հորդանան, Լաոս, Կամբոջա, Կիպրոս):

Համաձայն EAVA-ի 2021 թվականի ուսումնասիրության՝ 2011-2019 թթ.-ի ընթացքում առնվազն 132,000 մարդ (ներառյալ ընտանիքի անդամները) ներդրումային սխեմաների շրջանակում բավարարված 42180 հայտադիմումի միջոցով ԵՄ քաղաքացիություն կամ կացության իրավունք է ստացել՝ դրա համար հատկացնելով, ընդհանուր առմամբ, ավելի քան 21.8 միլիարդ եվրո: Ընդ որում, 7.4 միլիարդը գեներացվել է քաղաքացիություն՝ ներդրումների միջոցով (CBI) ծրագրերում, իսկ 18.8 միլիարդ եվրոն՝ կացության իրավունք՝ ներդրումների միջոցով սխեմայով (տես աղյուսակ 3):

Թեև ԵՄ անդամ երկրների գրեթե կեսը ներգրավված է RBI ծրագրերում, ներդրումներն ու հյուրընկալումները կենտրոնացած են միայն մի քանի երկրում: Պորտուգալիային, Իսպանիային, Հունաստանին և Լատվիային է բաժին ընկնում բոլոր

[13] Balakrishnan P., 13 Countries Giving Citizenship By Investment in 2024, Best Citizenships / https://best-citizenships.com/2021/03/26/how-many-citizenship-by-investment-programs-are-there/

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ԵՄ-ում CBI/RBI սխեմաների կիրառումը 2011-2019 թթ.[14]

Ցուցանիշ	CBI ծրագրեր	RBI ծրագրեր	Ընդամենը
Հայտադիմումների քանակը	3 811	38 369	42 180
Շահառուների թիվը (ներառյալ ընտանիքի անդամները)	8 769	123 374	132 143
Ներդրումների ծավալը (մլն եվրո)	7 497	13 877	21 374

հաստատված հայտադիմումների և կատարված ներդրումների մոտ 75%-ը: Դիտարկվող ժամանակահատվածում, RBI ծրագրերի շնորհիվ, ավելի քան 100 000 անհատ ձեռք է բերել ԵՄ-ում կացության վիզա, ինչը ԵՄ-ի համար ապահովել է ավելի քան 13 միլիարդ եվրո ընդհանուր եկամուտ, որից շուրջ 5 միլիարդ եվրո ստացել է Պորտուգալիան, 2,7 միլիարդ եվրո՝ Իսպանիան, իսկ մոտ 1,9 միլիարդ եվրո՝ Հունաստանը (տես գծապատկեր 1):

CBI ծրագրերի դեպքում յուրաքանչյուր հայտադիմումից գոյացած ներդրումները շատ ավելի տպավորիչ են նույնիսկ ծրագրերի փոքրաթիվ լինելու պարագայում, ինչը պայմանավորված է ավելի խոշոր ներդրումային պահանջներով: RBI ծրագրերի մեծ մասը պահանջում է 200 000-ից մինչև 500 000 եվրոյի ներդրում, մինչդեռ Մալթայի և Կիպրոսի CBI ծրագրերի պահանջները կազմել են համապատասխանաբար՝ 1 միլիոն եվրո և 2,5 միլիոն եվրո: Միայն CBI ծրագրերը մինչև 2019 թվականը ներգրավել են ավելի քան 7 միլիարդ եվրոյի ներդրում՝ 10 000 նոր քաղաքացիների գրանցմամբ (տես գծապատկեր 2):

ԵՄ CBI/RBI սխեմաների դիմորդները հիմնականում Ռուսաստանի, Չինաստանի, Թուրքիայի, Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի երկրների մեծահարուստներն են:

Խոշոր ներդրումների դիմաց քաղաքացիություն կամ ռեզիդենտություն (residence and citizenship by investment (CBI/RBI)) շնորհող կառուցակարգերը թեև անհատներին թույլ են տալիս տեղական ներդրումների միջոցով կամ հաստատագրված վճարի դիմաց միանգամայն օրինական ճանապարհով ստանալ քաղաքացիություն կամ բնակության իրավունք, սակայն, Տնտեսական համագործակցու-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

RBI ծրագրերով ներդրումների ծավալներն ըստ ընդունող ԵՄ երկրների[15]

[14] EPRS, Avenues for EU action on citizenship and residence by investment schemes: European added value assessment (Authored by Meenakshi Fernandes, Cecilia Navarra and David de Groot with María García Muñoz), European Parliamentary Research Service, PE 694.217 –October 2021, p. 13, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2021/694217/EPRS_STU(2021)694217_EN.pdf

[15] Նույն աղբյուրը:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

CBI ծրագրերով ներդրումների ծավալներն ըստ ընդունող ԵՄ երկրների[16]

թյան և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) գնահատմամբ, դրանք կարող են նաև չարաշահումների առիթ դառնալ՝ ընձեռելով ակտիվներն օֆշորում թաքցնելու և ընդհանուր հաշվետվողականության ՏՀԶԿ/G20 չափորոշիչները (CRS) շրջանցելու հնարավորություն: Մասնավորապես՝ CBI/RBI սխեմաների միջոցով ձեռք բերված նույնականացման քարտերը և այլ փաստաթղթեր կարող են չարաշահվել՝ անհատի հարկային ռեզիդենտությունը խեղաթյուրելու, եկամուտների մի մասը թաքցնելու և այդպիսով՝ եկամտային հարկերից խուսափելու համար[17]:

ՏՀԶԿ-ն հրապարակում է խոշոր ներդրումների դիմաց քաղաքացիություն կամ ռեզիդենտություն (residence and citizenship by investment (CBI/RBI)) շնորհող խնդրահարույց երկրների ցանկը՝ բարձր ռիսկային դիտարկելով այն սխեմաները, որոնք թույլ են տալիս օգտվել օֆշորային ֆինանսական ակտիվների վրա անձնական եկամտահարկի ցածր դրույքաչափից՝ միաժամանակ ֆիզիկական անձից չպահանջելով զգալի ժամանակ անցկացնել քաղաքացիություն կամ ռեզիդենտություն շնորհող վայրում: Ըստ այս չափանիշների՝ ՏՀԶԿ-ն որպես ռիսկային է գնահատել Անտիգուա և Բարբուդայում, Բահամյան կղզիներում, Բահրեյնում, Բարբադոսում, Կիպրոսում, Դոմինիկայում, Գրենադայում, Մալթայում, Սենթ Քիթս և Նևիսում, Սուրբ Լուչիայում, Սեյշելներում, Թերքս և Կայկոս կղզիներում, Արաբական Միացյալ Էմիրություններում և Վանատաուում առաջարկվող CBI/RBI սխեմաները[18]:

Այդուհանդերձ, անկախ առերևույթ գրավչությունից, «ոսկե անձնագրերի» ներդրումային ծրագրերը պարունակում են որոշակի ռիսկեր և մարտահրավերներ ինչպես ներդրողների, այնպես էլ առաջարկ ապահովող երկրների համար: Նմանօրինակ ծրագրերի առաջնային վտանգը կոռուպցիոն ռիսկերն են: Այսպես՝ ԵՄ երկրներում ներդրումային սխեմաների և դրանց ընթացակարգերի մշտադիտարկման արդյունքում բացահայտվել է, որ, օրինակ, Կիպրոսում և Պորտուգալիայում

[16] EPRS, Avenues for EU action on citizenship and residence by investment schemes: European added value assessment (Authored by Meenakshi Fernandes, Cecilia Navarra and David de Groot with María García Muñoz), European Parliamentary Research Service, PE 694.217 –October 2021, p. 16, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2021/694217/EPRS_STU(2021)694217_EN.pdf

[17] Փախլյան Ա.Ա., Աշխարհի տխրահռչակ «հարկային դրախտները» // «Ամբերդ» տեղեկագիր № 4(17) – 2022, էջ 113-120, DOI: 10.52174/2579-2989_2022.4-113, https://asue.am/upload/files/amberd/2022-year-4/14.pdf

[18] OECD, Residence/Citizenship by investment schemes / https://www.oecd.org/tax/automatic-exchange/crs-implementation-and-assistance/residence-citizenship-by-investment/ (Accessed: 25.02.2024).

կոռուպցիոն ռիսկեր են առաջանում՝ ի հաշիվ այն բանի, որ հայտերն ուսումնասիրելիս ոչ բոլոր դեպքերում է հաշվի առնվում դիմորդի միջոցների կամ հարստության աղբյուրը, իսկ Մալթայում «հատուկ պայմանների» ապահովման դեպքում կարող են դիտարկվել նույնիսկ քրեական անցյալ ունեցող կամ քրեական հետաքննության ենթակադիմորդները[19]: Չարաշահումների, խարդախության և կոռուպցիայի նկատմամբ խոցելի CBI/RBI ծրագրերը, ի վերջո, կարող են խաթարել երկրի հեղինակությունն ու վարկանիշը՝ դեպի իրենց ձգելով կասկածելի ծագում ունեցող անձանց, ինչպիսիք են փողերի լվացման, կոռուպցիայի կամ կազմակերպված հանցավորության մեջ ներգրավվածները: Անվտանգայինից բացի, պետք չէ անտեսել նաև տնտեսական ռիսկերը: Մտավախություն կա, որ, օրինակ, CBI/RBI ծրագրերի միջոցով հարուստ ներդրողների հոսքը կարող է աղավաղել անշարժ գույքի տեղական շուկաները, բարձրացնել անշարժ գույքի գները և տեղացի բնակիչների համար առաջացնել բնակարանների մատչելիության խնդիրներ:

[19] EUROPEAN GETAWAY: INSIDE THE MURKY WORLD OF GOLDEN VISAS, Transparency International and Global Witness 2018 / https://images.transparencycdn.org/images/2018_report_GoldenVisas_English.pdf, p. 3.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը պետական տուրքի մասին (ՀՕ-186, ընդունված 27.12.1997թ.), հոդված 14, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=73142
2. Փախլյան Ա.Ա., Աշխարհի տխրահռչակ «հարկային դրախտները» // «Ամբերդ» տեղեկագիր № 4(17) – 2022, էջ 113-120, DOI: 10.52174/2579-2989_2022.4-113, https://asue.am/upload/files/amberd/2022-year-4/14.pdf
3. Кипр и Мальта лишили «золотых паспортов» граждан Беларуси и России, «Белорусы и рынок», 15 мая 2023, https://belmarket.by/news/news-52721.html
4. 13 Countries Giving Citizenship By Investment in 2024, https://best-citizenships.com/2021/03/26/how-many-citizenship-by-investment-programs-are-there/
5. Balakrishnan P., 13 Countries Giving Citizenship By Investment in 2024, Best Citizenships, https://best-citizenships.com/2021/03/26/how-many-citizenship-by-investment-programs-are-there/
6. Best Citizenships, Free Guide to Citizenship by Investment (CBI), 10.03.2021, https://best-citizenships.com/2021/03/10/guide-to-citizenship-by-investment/
7. Countries that Allow Dual Citizenship 2024, https://worldpopulationreview.com/country-rankings/countries-that-allow-dual-citizenship
8. Countries with Birthright Citizenship 2024, https://worldpopulationreview.com/country-rankings/countries-with-birthright-citizenship
9. Department of Citizenship Services, Acquisition of Turkish Citizenship for Foreign Investors, 03.10.2019, https://best-citizenships.com/citizenship-investment-legislation-and-acts/
10. EPRS, Avenues for EU action on citizenship and residence by investment schemes: European added value assessment (Authored by Meenakshi Fernandes, Cecilia Navarra and David de Groot with María García Muñoz), European Parliamentary Research Service, PE 694.217 –October 2021, 54 p., https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2021/694217/EPRS_STU(2021)694217_EN.pdf
11. European Getaway: Inside The Murky World Of Golden Visas, Transparency International and Global Witness 2018, 85 p., https://images.transparencycdn.org/images/2018_report_GoldenVisas_English.pdf
12. Global Financial Integrity, Citizenship by Investment / https://gfintegrity.org/issue/citizenship-by-investment/
13. Global Passport Fees 2024: How much do you pay? https://www.passport-collector.com/global-passport-fees/
14. Global Passport Power Rank 2024 / https://www.passportindex.org/byRank.php
15. Hardest Countries to Immigrate To 2024, https://worldpopulationreview.com/country-rankings/hardest-countries-to-immigrate-to.
16. OECD, Residence/Citizenship by investment schemes, https://www.oecd.org/tax/automatic-exchange/crs-implementation-and-assistance/residence-citizenship-by-investment/

Анна ПАХЛЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ.
кандидат экономических наук, доцент

А ВЫ ЗНАЕТЕ, ЧТО...?

ГРАЖДАНСТВО ЧЕРЕЗ ИНВЕСТИЦИИ: ЛОВУШКА ИЛИ ИСКЛЮЧИТЕЛЬНАЯ ВОЗМОЖНОСТЬ?

В каждой стране действуют свои законы и подходы к гражданству, которые существенно отличаются друг от друга.

Наряду с глобальными событиями, даже паспорта и гражданство часто превращаются в бизнес и объектом для торгов. Благодаря крупным инвестициям, пожертвованиям или покупке дорогой недвижимости частными лицами, сегодня можно получить гражданство или, согласно брендовому названию, «золотой паспорт» во многих странах Европы или Латинской Америки, пользуясь широким спектром привилегий и полномочий. Однако привлекательность таких инвестиционных схем также несет в себе серьезные риски: страны становятся объектами коррупционных рисков и отмывания денег.

Ключевые слова: *гражданство, вид на жительство, инвестиции, золотые паспорта*

Anna PAKHLYAN
Senior Researcher at «Amberd» Research Center,
PhD in Economics, Associate Professor, ASUE

DO YOU KNOW THAT...? .

CITIZENSHIP BY INVESTMENT: TRAP OR EXCEPTIONAL OPPORTUNITY?

Each country has its own laws and approaches to citizenship that differ significantly from each other.

Along with global developments, even passports and citizenship are often turned into business and a bargaining object. Through large investments, donations or the purchase of expensive real estate by private individuals, it is possible today to acquire citizenship or, as it is called more branded, a "golden passport" in many European or Latin American countries, enjoying a wide range of privileges and powers. However, the attractiveness of such investment schemes also carries serious risks, with countries becoming targets for corruption risks and money laundering.

Keywords: *citizenship, residency, investments, golden passports*